ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
с.ГЕХАКЕРТ

Գեղակերտի գյուղապետարան հեռ. 093250663 , 0231 63447 Село Гехакерт тел. 093250663 , 0231 63447

N 01

«08» << 01 >> 2013թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Ա. Ղահրամանյանին

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբեր ամսին ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 11 էջ:

Գեղակերտ համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

78-13
09 01 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի2012թ. N80

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Համբարձում Համբարձումյանի դիմումը

1. 039-002 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորի վրա կառուցված բնակելի տանը տրամադրել հասցե՝ Գարեգին Նժդեհի փողոց, տուն 15:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012 թվական դեկտեմբերի 26
Գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2012թ. N 79

### ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի երրորդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով

Որոշում եմ՝

1. 2013թվականի փետրվարի 18-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությանը մասնակցող թեկնածուների քարոզչական պաստառները փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝
   1)Մեսրոպ Մաշտոցի փողոց,28 -4քմ
   2)Մեսրոպ Մաշտոցի փողոց,40-4քմ
   3)Մեսրոպ Մաշտոցի փողոց,41-4քմ
   4)Մեսրոպ Մաշտոցի փողոց,45-4քմ
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական դեկտեմբերի 20
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

<<20>> դեկտեմբերի 2012թ. N 78

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի14-րդ, 15-րդ, 16-րդ հոդվածներով

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ին կայանալիք ընտրության ..անցկացման համար կազմավորել երկու ընտրական տեղամաս :
2. Առաջին ընտրական տեղամասը կազմավորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի մշակույթի տանը, իսկ տեղամասային կենտրոնը կազմավորել մշակույթի տան առաջին հարկում:
3. Երկրորդ ընտրական տեղամասը կազմավորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի <<Գեղակերտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքում, իսկ տեղամասային կենտրոնը կազմավորել դպրոցի առաջին հարկում:
4. Առաջին տեղամասային կենտրոնի տիրապետող նշանակել Մանուշ Հովհաննիսյանին;
5. Երկրորդ տեղամասային կենտրոնի տիրապետող նշանակել Գեղակերտի միջնակարգ դպրոցի ուսումնական մասով փոխտնօրեն Մարիամ Ղազարյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012 թվական դեկտեմբերի 20
Գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի2012թ. N77

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Սուրիկ Բարեղամյանի դիմումը

Որոշում եմ

1. 033-009 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորի վրա կառուցված բնակելի տանը տրամադրել հասցե՝ Վարդան Մամիկոնյան փողոց, տուն 15:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012 թվական դեկտեմբերի 06
Գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» դեկտեմբերի2012թ. N76

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Ցողիկ Մինասյանի դիմումը

Որոշում եմ

1. 038-024 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորի վրա կառուցված տրամադրել հասցե՝ Արմեն Մանուկյան փողոց, տուն 2:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012 թվական դեկտեմբերի 04
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N15

«10»«դեկտեմբերի»2012թ.

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ՝ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասով

Կարգադրում եմ

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցներին տալ հավելավճար՝ միանվագ դրամական պարգևի ձևով՝ յուրաքանչյուրին իր մեկ ամսվա աշխատավարձի չափով համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2012թվական դեկտեմբերի 10
Գ. Գեղակերտ

Հավելված հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտի
Գյուղական համայնքի ղեկավարի
2012 թվականի դեկտեմբերի 10-ի
Թիվ 15Ա կարգադրությամբ

## ՀԱՎԵԼԱՎՃԱՐ (ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ )ՍՏԱՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| | |
|---|---|
| 1. Առաքելյան Սերյոժա | 180.000 |
| 2. Հարությունյան Նատալյա | 110.000 |
| 3. Համբարձումյան Նաիրա | 101.000 |
| 4. Գալստյան Սուսաննա | 100.000 |
| 5. Զաքարյան Դավիթ | 100.000 |
| 6. Թովմասյան Լարիսա | 95.000 |
| 7. Մովսեսյան Կարինե | 90.000 |
| 8. Գալստյան Անժելա | 90.000 |
| Ընդամենը ութ հարյուր վաթսունվեց հազար դրամ | 866.000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<04>> դեկտեմբերի 2012թ. N14

### ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի տարածքում ընտանի կենդանիների հաշվառման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական դեկտեմբերի 04
գ. Գեղակերտ

Հավելված հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտ
համայնքի ղեկավարի 2012
դեկտեմբերի 04-ի թիվ 14 Ա
կարգադրությամբ

# ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Զաքարյան Դավիթ -հանձնաժողովի նախագահ
2. Թովմասյան Լարիսա -անդամ
3. Մովսեսյան Կարինե -անդամ
4. Գալստյան Անժելա -անդամ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<04>> դեկտեմբերի 2012թ. N13

### ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին գույքագրման արդյունքում կազմել համապատասխան ակտ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական դեկտեմբերի 04
գ. Գեղակերտ

Հավելված հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտ
համայնքի ղեկավարի 2012
դեկտեմբերի 07-ի թիվ 13 Ա
կարգադրությամբ

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Հարությունյան Նատալյա -հանձնաժողովի նախագահ
2. Ամիրխանյան Ջավահիր -անդամ
3. Համբարձումյան Նաիրա -անդամ
4. Գալստյան Սուսաննա -անդամ
5. Հովհաննիսյան Մանուշ -անդամ